# ՔԱՐՈԶԽՈՍԱՔԱՂ

## Տ. ԳԵՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐՈՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(01 հունվարի, 2014 թ.)

«Այլ մինչդեռ ժամանակս ի ձեռս է,
գործեսցուք զբարիս ի կեանս յայսոսիկ»
**(Ժամագիրք)**

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ,

Վերստին Նոր տարի է:

Ամեն կիրակի միարան սիրով համախմբվում ենք Պատարագի Սուրբ Խորհուրդին՝ Եկեղեցու հետ հաղորդության մեջ մնալու գիտակցությամբ:

Այս առավոտը, սակայն, յուրահատուկ նշանակություն ունի քրիստոնյայի համար, ա՛յլ մտածումներ եւ հույզեր են առաջնորդել մեզ եկեղեցի: Թեեւ չենք կարողանում հաճախ լիարժեք բացատրել այս յուրահատուկ հոգեւոր փոձառությունը, սակայն ներքուստ ապրում ենք անկրկնելի ուրախության մի զգացում, որ ծնվում է Նոր տարվա գալուստն ազդարարող ժամացույցի սլաքների անհամբեր սպասումից: Ակամայից այսօր ամեն ինչ նոր է թվում մեր աչքին, անկախ նրանից, որ դեռ երեկ տեսել ու զգացել ենք նույն բաները, միեւնույնն է, ուրիշ հայացքով ենք այսօր նայում աշխարհին, ներքուստ գիտակցում ենք, որ այս ամենի մեջ անմեկնելի հրաշք կա թաքնված:

Հույսի եւ հույզի այս խճապատկերում, մեր ներսում շոշափելիորեն մարմին է առնում այն հավատը, որ կարելի է ամեն ինչ նորից սկսել, կարող ենք անել ավելին, կարող ենք լինել ավելի լավը: Նույնիսկ այն դեպքում, երբ ձեռքբերումներն ավելի շատ են եղել անցնող տարվա ընթացքում, միեւնույն, է, ավելիին հասնելու ձգտումն է խոսում մեր մեջ: Քրիստոնեական տեսանկյունից սա ունի իր բացատրությունը. իրականում կատարելության հանդեպ ներքին մղումն է, որ մարդուն թույլ չի տալիս բավարարվելու եղածով, այլ ստիպում է շարունակաբար ձգտել նորին, ավելի բարձրին, ավելի կատարյալին: Կատարելության այս ներքին մղումն անմիջականորեն կապ ունի Քրիստոսի ավետարանական պատգամի հետ. «Արդ եղեք կատարյալ, ինչպես ձեր երկնավոր Հայրն է կատարյալ», - ուսուցանում է Նա:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, մարդկության պատմությունն արդեն ո՛րերորդ անգամ դիմավորում է նոր տարին. ոչ հոգեւոր աչքի համար սա միգուցե հերթական Նոր

տարին է, հուսահատ հոգու կանխատեսմամբ այս տարին ոչնչով տարբեր չի լինի անցած-գնացած տարիներից, կոտրված սրտին չի ուրախացնում ո՛չ հինը, ո՛չ նորը: Անվերջ հոգեկան բավարարություն փնտրող մարդը նույնպես անտարբեր է օրվա խորհրդի նկատմամբ, քանզի նա չի կարողանում զգալ պահի մոգականությունը, վերափոխող ներգործությունը: Ազահը փորձում է կյանքից խլել հերթական վայելքը, ապագայի հանդեպ անորոշությունը նրա մեջ խլացրել է իղձի ձայնը, նա վազում է միայն սեփական ես-ի ցանկություններին բավարարություն տալու, հեշտալից հաճույքների հետևից: Զգում է, որ անցնում է ժամանակը եւ իր կարճամտությամբ ձգտում է նրանից վերցնել առավելագույնը, քանզի չունի հավիտենական կյանքի հույսը, նրա համար ամեն ինչ մարմնականով է սկսվում եւ վերջանում, սարսափում է, երբ գիտակցում է, որ մեկ տարի էլ անցավ իր կյանքի ժամանակից, երկյուղում է, երբ զգում է, թե ինչպես է գաղտագողի մոտենում մահը, սակայն ձգտում է փախչել նրա հետապնդող սրվերից՝նոր հաճույքների փնտրտուքին տրվելով, անգիտանալով, որ ամեն ինչ ունի վերջ, եթե պատահի, որ հիշում է Աստծուն, ապա այնքան հեռու է թվում Նա, որ հաջորդ վայրկյանին արդեն մոռանում է այդ մասին:

Սակայն այլ կերպ է նայում իրերին քրիստոնյան, եւ նրա հայացքը ճշմարիտ է, նրա կենցաղն առավել քան ներշնչում է ազատ ստեղծարար սիրով ապրելու մեր կյանքի յուրաքանչյուր օրը, նա սովորեցնում է մեզ լինել անկաշկանդ ամեն տեսակի պայմանականություններից, նա քարոզում է մեզ ազատագրվել բոլոր տեսակի վախերից, լինել անկեղծ սեփական անձի հետ, նրա հայացքի մեջ չկա անորոշություն եւ տագնապ, այլ՝ սեր ու վստահություն դիմացինի հանդեպ: Նա ապրելու նպատակը չի տեսնում ընդունայն ցանկությունների բավարարման մեջ, կատարելապես հոգով աղքատ է, չի հագենում Տիրոջ Խոսքի ճաշակմամբ, շարունակ ձգտում է հնազանդությամբ աճել հավատքի մեջ, բնավ չի փնտրում իր անձը, չի մրցում ընկերոջ հետ, իրեն ցածր է դասում բոլորից, պատրաստ է վերջինը կիսելու անծանոթի հետ, քանզի չունի որեւէ կապվածություն այս աշխարհին, Տիրոջ պատվերի համաձայն՝ նա իր գանձերը երկնքում է դիզում, նա չի դատապարտում եւ տրտնջում, այլ ողորմություն է անում շարունակ, քանզի գիտակցում է, որ ինքը եւս մեղավոր մեկն է: Նրան չի վախեցնում ո՛չ ցուրտը, ո՛չ աղքատությունը, ո՛չ մենակությունը, քանզի նա զգում է Տիրոջ կենդանի ներկայությունն իր կյանքում: Նա նույնպես զգում է, որ անցնում է ժամանակը, սակայն հոգով խաղաղ է, վախով ու ափսոսանքով չի տագնապում, որ ահա մեկ տարի էլ կորցրեց իր կյանքից, քանզի հավատում է, որ մոտենում է Տիրոջ խոստացած փրկության ժամը, բերկրալից ուրախությամբ սպասում է այն երջանիկ օրվան, թե երբ է վերջապես արժանանալու Քրիստոսի երկնային տեսությանը: Նա երջանիկ է, աշխարհի երջանիկը, ոչ թե՝ որ ոչնչի պակասություն չունի, այլ որ ունի Քրիստոսին իր կյանքում, ամեն վայրկյան զգում է, թե որքան մոտ է կանգնած Աստված իրեն:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ. քրիստոնեական տեսանկյունից յուրաքանչյուր տարի Տիրոջ տարին է, եւ ոչ լոկ այն պատճառով, որ Աստված է ժամանակի Տերը, այլեւ այն հավատի շնորհիվ, որ ամեն մի տարի իր յուրահատուկ նշանակությունն ունի փրկության պատմության համար, քանզի այն նոր հոգեւոր փորձառության մի կարեւոր հանգրվան

է, որ Սուրբ Երրորդության առաջնորդությամբ փանում է մեզ դեպի խոստացված ժառանգություն:

Սակայն փարին, օրն ու ժամը իմաստ ունեն, երբ գիտակցում ենք, որ կյանքը շնորհ է, երբ հասկանում ենք, որ Աստված յուրաքանչյուրիս ուրույն առաքելության հնարավորություն է տվել այս կյանքում: Եթե չունենանք այս բարձր, միեւնույն ժամանակ պարզ հասկացությունը կյանքի մասին, երբեւէ մեզ բավարարված չենք զգա, նույնիսկ եթե մեզ հաջողվի իրագործել մեր բոլոր երազանքներն ու ցանկությունները, միեւնույն է, միշտ հալածելու է մեզ ունայնության սրվերը, կրծելու է մեր հոգին ձանձրույթի որդը, քանզի միշտ ապրելու ենք մեր անձը կորցնելու վախով, հասկանալով, որ ամեն ինչ վերջիվերջո անցնում է: Մեր քրիստոնեական գիտակցությունը, հետեւաբար, հուշում է մեզ, որ հավատի առաջին գործը կյանքը իբրեւ շնորհ ընդունելն է, միայն այս հասկացողությամբ կարող ենք փրկել մեր անձը նյութի չընդհատվող մրցավազքից, փրկվել հավիտենության համար, ապրել Քրիստոսի կյանքի օրինակով:

Սիրելի՛ներ,Հայոց Եկեղեցին այսօր վերստին հրավիրում է իր զավակներին՝ խորհրդածելու ժամանակի քրիստոնեական ընկալման մասին, հորդորում է ճիշտ գնահատել այն, ավելին, պատասխանատվությամբ վերաբերվել մեր կյանքի ամեն մի ժամվան, րոպեին եւ նույնիսկ վայրկյանին, քանի որ դա է պահանջում քրիստոնեական հավատի ոգին, դա է պահանջում ոչ միայն մեր անձերի նկատմամբ, այլեւ ողջ փիեզերքի հարաբերությամբ, քանզի մարդկային պատմությունը պարզապես պատմություն չէ, այլ փրկության պատմություն է: Քրիստոսի վարդապետությունը մեզ սովորեցնում է, որ մարդը փիեզերական էակ է, այս նկատի ունեին Եկեղեցու հայրերը, երբ շեշտում էին՝ «Աստված մարդացավ, որ մարդն աստվածանա»: Քրիստոնեական մտածողության մեջ ժամանակն ու հավիտենությունը ոչ թե իրար հակասող հասկացություններ են, այլ միմյանց շարունակող, փոխլրացնող հոգեւոր իրողություններ. ժամանակն է այն դուռը, որը տանում է մեզ հավիտենություն: Հայոց Եկեղեցու սրբազան հայրապետներն ու վարդապետներն այս իմաստով լավագույնս արժեւորել են ժամանակի խորհուրդը, ցույց են տվել նրա կապը հավիտենության հետ: Այդ կապն իր բյուրեղացումն է գտել մասնավորապես Հայոց Եկեղեցու «Ճաշու իններորդ» ժամերգության առանցքային աղոթքներից մեկում, գրված Հայոց մեծագույն Հայրապետներից մեկի՝ Սուրբ Հովհան Մանդակունու ձեռքով: Սուրբ Հայրապետը եկեղեցու հավատացյալներին այսօր կրկին դարերի խորքից հորդորում է.

«Բարիք գործենք այս կյանքում, քանի դեռ ժամանակը մեր ձեռքում է»: Ավելի խորն անհնար է քրիստոնեական իմաստով սահմանել ժամանակի նպատակը, հասկանալ նրա կապը հավիտենության հետ, փրկության համար: Հայրապետը սովորեցնում է մեզ, որ ժամանակի խորհուրդը թաքնված է հավատքի բարի գործերով հարատեւելու մեջ, այն հավիտենական կյանքի հանդեպ բացված մի լուսամուտ է, որտեղից ներս է թափանցում աստվածային իմաստության լույսը, հասունացնում մեզ փրկության ժառանգության համար:

Հետեւաբար ունկնդրենք Սուրբ Հայրապետի դարերից հնչող կենսատու պատգամին՝ «**Այլ մինչդեռ ժամանակս ի ձեռս է, գործեսցուք զբարիս ի կեանս յայսոսիկ**»: